ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌՔՈՎ ՕՐՀՆՎԵՑ «ՎԵՐԱԾՆՆԴՅԱՆ ՄՅՈՒՌՈՆԸ»

«Նա որ օծուի սրանով՝
Վերստին ծննդեան այս իւղով
Դառնայ երկիւղած առ Աստուած
Եւ աներկիւղ ընդդէմ հակառակորդաց»:

Սեպտեմբերի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայրավանքում մատուցվող սրբական Պատարագից հետո, առավոտյան ժամը 11.00-ին, Մայրավանքի մուտքի մոտ տեղադրված բեմահարթակի վրա, ի տես հավատացյալ և ուխտավոր ժողովրդի, բարձրաստիճան պետական ու հոգևոր այրերի, հյուրերի, սկսվեց Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը՝ առաջինը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում և վերջինը՝ երկրորդ հայպարապետությունում:

Պահը հանդիսավոր է և հուզումնալից:



Մայրավանքի կանգերի և «Խորհուրդ խորին» շարակնի հնչյունների ուղեկցությամբ Վեհարանից դանդաղաքայլ, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, դեպի Մայր Տաճար է ուղղվում տոնական հանդերձավորված շքախումբը՝ ընդգծելով Ս. Էջմիածնի բիբլիական վեհությունն ու գեղեցկությունը:

Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ տասներկու եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների (Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ

Արք. Մանուկյան, Մեսրոպ Արք. Աշճյան, Շահան Արք. Սվազյան, Խաժակ Արք. Պարսամյան, Վաչե Արք. Հովսեփյան, Գարեգին Արք. Ներսիսյան, Զավեն Արք. Չինչինյան, Տիրան Արք. Կյուրեղյան, Գյուտ Արք. Նագգաշյան, Գրիգորիս Արք. Բունիաթյան, Պարգև Եպս. Մարտիրոսյան, Գիսակ Եպս. Մուրադյան), որոնք խորհրդանշում են Հիսուսի տասներկու առաքյալներին, բարձրանում է բեմահարթակ, ուր դրված է Մյուռոնի կաթսան: Սրբազան եպիսկոպոսները Ս. Գրքից ընթերցում են համապատասխան հատվածներ՝ Մյուռոնի պատրաստության, նրա հոգևոր խորհրդի և գործածության մասին: Ապա Վեհափառ Հայրապետը կարդում է Մյուռոնօրհնեքի գլխավոր աղոթքը: Ընթերցվում են Մյուռոնօրհնության երկրորդ և երրորդ աղոթքները:

Մայր Տաճարի լուսարարապետ Հուսիկ արք. Սանթուրյանի հրավերով կաթսան բացում է մյուռոնօրհնության կնքահայրը: Վեհափառ Հայրապետը հանդիսավոր կերպով կաթսայի մեջ է լցնում 40 անուն ծաղիկների նեկտարներից պատրաստված խառնուրդը և բալասանը, որից հետո, Մեսրոպ Արք. Աշճյանի կողմից ողջույնի և սիրո խոսքով, Արամ Ա Կաթողիկոսի անունից, խառնվում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից բերված Մյուռոնը: Եկեղեցու վանքերի ղողանջների ներքո նոր Մյուռոնին է խառնվում հինը՝ ներծծված Ս. Գրիգոր Լուսավորչի շնչով ու լույսով՝ իբրև Հայ Եկեղեցու հավերժության ու կենսունակության խորհրդանիշ:

Ապա Վեհափառ Հայրապետը՝ երեք սրբություններով՝ Ս. Կենաց փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսավորչի աջով երեք անգամ «տեառնագրում» և խառնում է նորաօրհնյալ Մյուռոնը և կարդում վերջին աղոթքը:

Մյուռոնօրհնության արարողության ավարտին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը իր հայրապետական պատգամը տվեց ներկաներին:

Անդրադառնալով նախորդ օրը տեղի ունեցած նահատակ Խորեն Մուրադբեկյանի աճյունի՝ Ս. Գայանե վանքից ի Մայր Տաճար տեղափոխության արարողությանը, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ իր անդրանիկ մյուռոնօրհնությունը, «որպէս խունկ բուրումնաւէտ», ընծայում է նրա «պայծառ և ճաճանչող» հիշատակին:

Սրբալույս Մյուռոնի օրհնությունն ավարտվեց «Հայր մեր»-ով: Ներկաները իբրև մեկ սիրտ և մեկ հոգի երգեցին Տերունական Աղոթքը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ տիկնոջ հետ, Սկզբային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, վարչապետ Հրանտ Բագրատյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը՝ տիկնոջ հետ, Լեռնային Ղարաբաղի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Արտաքին գործոց նախարար Վահան Փափազյանը, Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Ֆինանսների նախարար Լևոն Բարխուդարյանը, Գիտության և կրթության նախարար Վարդգես Գնունին, Առևտրի, սպասարկումների և զբոսաշրջիկության նախարար Վահան Մելքոնյանը, Բնապահպանության և ընդերքի նախարար Սուրեն Ավետիսյանը, Տեղեկատվության

նախարար Հրաչյա Թավրաչյանը, Տրանսպորտի և հաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը, Քաղաքաշինության նախարար Ֆելիքս Փիրումյանը, Արտակարգ իրավիճակների վարչության նախագահ Ստեփան Բաղալյանը, Տարածքային կառավարման գծով նախարար Ռուբեն Բարսեղյանը: Հայ եկեղեցական շրջագծից ներս ներկա էին՝ Կիլիկիո Կաթողիկոսությունից Տաթև Արք. Սարգսյանը, Մեսրոպ Արք. Աշճյանը, Օշական Եպս. Չոլոյանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկյանը, Թուրքիո Հայոց Պատրիարքությունից Շահան Արք. Սվաճյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թեմական Առաջնորդները: Իսկ դիվանագիտական շրջանակներից՝ Ռուսաստանի արտակարգ և լիապոր դեսպան Անդրեյ Ռոնովը, Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիապոր դեսպան Համիդեզա Նիքքար Էսֆահանին, Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիապոր դեսպան Դեյվիդ Միլլերը, Գերմանիայի արտակարգ և լիապոր դեսպան Տիկ. Կարոլա Մյուլլեր Հոլթքեմփերը, Հունաստանի արտակարգ և լիապոր դեսպան Յակովոս Սպեցիուսը, Վրաստանի արտակարգ և լիապոր դեսպան Գրիգոլ Բարամիձեն, ներկայացուցիչներ Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Եգիպտոսի դեսպանություններից, միջազգային կազմակերպություններից, բարձրաստիճան հյուրեր և պաշտոնյաներ:

Ներկա էին նաև քույր եկեղեցիներից. Ռուսիո Պատրիարքությունից՝ Ալեքսիյ Բ Պատրիարքի ներկայացուցիչ Կոլոմենսկի և Կրուտիցի Միտրոպոլիտ Պիտիրիմը, Ինոկենտի Եպիսկոպոսը, Վրաց Պատրիարքությունից՝ Սիսալցխայի առաջնորդ Սերգեյ Եպիսկոպոսը, Սաֆարավանքի Տիմոթեոս Վանականը, Անգլիկան Եկեղեցուց՝ Կանոնեսկու Չեթ Գուսմելքրը:

Այստեղ էին աշխարհասփյուռ հայության ավելի քան 15 հազար հավատացյալներ: Արարողությունը լուսաբանելու համար ներկա էին 170 լրագրողներ՝ արտասահմանի, Սփյուռքի և տեղական գործակալություններից ու պարբերականներից: Արարողության ողջ ընթացքը հեռարձակվեց ուղիղ եթերով, ողջ Հայաստանի տարածքում:

Օրվա ընթացքում Սրբալույս Մյուռոնի կաթսան հավաքուրելու և իրենց ուխտը վերանորոգելու նպատակով Մայրավանք այցելեցին 40 հազարից ավելի հավատացյալներ և ուխտավորներ:

ԹԱՄԱՐ ԳԵՂԱՄՅԱՆ